

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Անկախության հռչակումից հետո անցած տարիներին ավելի ծավալվեց հայոց լեզվի մաքրության արդար միտումը, որը, ցավոք, մաս ունեցավ ծայրահեղ բացասական դրսևորում-հետևանքներ: Սկսվեց մաքրամոլության մի մոլուցք, որին զոհ գնացին վաղուց արդեն քաղաքացիական իրավունք ստացած բառեր, որոնք փոխառնված, ներմուծված օտար մշակույթների բնորոշումներ լինելով, հայացել էին և դարձել երբեմն որպես կենցաղային, առտնին օգտագործվող:

Մաքրամոլության (պուրիզմ) մոդան տարածվեց մաս մասնագիտական ասպարեզներում, և կատարվեցին անհարկի այնպիսի կամայական դրսևորումներ, որոնք ոչ միայն տեղին չէին, այլև երբեմն զավեշտական էին:

Կան բնագավառներ, որոնց պրոֆեսիոնալ մասնագետներն ամբողջ աշխարհում „խոսում,, են հունարենից կամ լատիներենից փոխառած տերմիններով: Գրականագիտությունը ևս օգտվում է հունալատինական լեզվային գիտական շտեմարանից, և ամբողջ քաղաքակիրթ աշխարհի գրականագետների համար հիմնականում գոյություն ունի գիտական միասնական տերմինաբանություն: Եվ, ահա, մեզանում ասպարեզի մի քանի գիտնականներ, անտեսելով այս հանգամանքը, փորձում են շարունակել հարությունը հունաբան դպրոցի (5-6 դդ.)՝ հունարենից փոխառած նեղ իմաստային թարգմանությունների գրաբարյան տերմինների և կամ էլ լատինական դպրոցի (16-17դդ) ու նրա շարունակությունը հանդիսացող Մխիթարյան միաբանության վարդապետների լեզվաբանական, թարգմանական ու աստվածաբանական ուսումնասիրությունների ընդմիջումներին՝ հանգաբանական ժամանցներին ստեղծված հնարովիներին, և կամ էլ հայերեն նոր տերմիններ են մոգոնում, ստեղծում:

Դիտարկենք գրականագիտության երկու բնագավառների՝ տաղաչափության ոտքերի և կրկնության շարահյուսական կամ ոճաբանական ֆիգուրների (հնարների) անվանումները:

Երկվանկ ոտքերի համար աշխարհն օգտագործում է *յամբ* և *քորեյ*, իսկ հայերը հունաբան դպրոցից եկող՝ *մեծավերջ*¹ և *մեծասար*² : Այսօր սրանք չեն հասկացվում, և առաջանում է, թե այդ ինչի՞ մեծ վերջն ու մեծ սարն է: Էլ չեմ խոսում *քորեյամբ* քառավանկ ոտքի հայերեն շինծու անվանման մասին՝ *մեծասարամեծավերջ*:

Նույնը և եռավանկ ոտքի հարցում՝ *անապեստ*, *ամֆիբրաքսոս*, իսկ մեզանում *անապեստի փոխարեն*՝ *վերջատանջ*³ (*էս ի՞նչի կամ ի՞նչ վերջի տանջ է*), *ամֆիբրաքսոսի փոխարեն*՝ *քողաղոտ* (*էս ի՞նչ աղոտ քող է*):

Նույն երևույթն է բառակրկնությունների, պոետիկայի (բանարվեստ) մյուս մարզերում: Աշխարհի գրականագետներն օգտագործում են բառակրկնությունների հետևյալ տերմինները (եզրե՞րը). բանատողի սկզբում կրկնվող բառերը կոչվում են *անաֆոր* (հունարեն): Ջրբաշյան – Սախչանյան գրականագիտական բառարանում այն դրված է *հարակրկնությամբ*⁴ տակ: Ինչու՞ է հայացվել, չէ ու բանատողի վերջի կրկնությունները ևս կարող են հարկրկնվողների տակ հասկացվել: Իսկ հայերենի քերականության մեջ *հարակրկնության* տակ այլ իմաստ ու երևույթ է հասկացվում, որն էլ կարող է ու շփոթ է առաջացնում: Մեր կարծիքով, ճիշտը *անաֆոր* միջազգային *տերմինի* (եզրի) օգտագործումն է, որը մեզ գերծ կպահի ամեն տեսակի շփոթությունից: „Հայերենագիտական, բառարանում *անաֆորը* թարգմանված է *սկզբնակրկնություն*»,⁵ որն ավելի մոտ է *անաֆորին*, քան *հարակրկնությունը*:

Բանատողի վերջում հանդես եկող բառակրկնությունները կոչվում են *էպիֆոր* (հունարեն), որն էլ վերը նշված գրականագիտական բառարանում տեղադրված է *վերջույթ*⁷ տերմինի տակ: Սա էլ խիստ պայմանական տերմին է, որովհետև քերականության մեջ *վերջույթի* տակ բացարձակ ուրիշ և ճիշտ իմաստ է դրված, որը ևս շփոթի առիթ է տալիս: „Հայերենագիտական բառարանում, *էպիֆորին* ավելի մոտ տերմին է օգտագործված՝ *վերջակրկնություն*»⁸:

Մեր հարևան պարսից գրականությունից փոխ ենք առել հանգավոր բառերից հետո տողավերջում հանդես եկող բառի կամ բառերի կրկնությունը և օգտագործել ենք *ռադիֆ-ռեդիֆը*: Ու ճիշտ ենք արել:

Նշված հայերեն գրականագիտական բառարանում չկան բառակրկնությունների մի քանի տեսակներն ու դրանց ո՛չ միջազգային և ո՛չ էլ սարքովի

հայերեն անվանում-տերմինները:

Բանատողի վերջում և հաջորդ բանատողի սկզբում կրկնվող բառերը կոչվում են կցում (ստիկ, հունարեն՝ անադիպլոսիս):

Օր.՝ Կցում ռեդիֆով.

Քուն թե արթուն՝ օրիս շատը *երազ* եղավ, անցկացավ,
երազն էլ, նուրբ ու խոսափուկ, *վրոազ* եղավ, անցկացավ,
վրոազ անցան երազ, մուրազ, ու չհասա ոչ մեկին,
Կյանքըս թեթև տանուլ տըված գըրազ եղավ, անցկացավ:
/ Դովհ.Թումանյան/

Օր.՝ Կցում առանց ռեդիֆի.

Քանի ծեռից եմ *վառվել*,
վառվել ու *հուր* եմ դառել,
Դուր եմ դառել՝ *լույս տվել*,
Լույս տալով եմ սպառվել:
/ Դովհ.Թումանյան/

Սա ոչ միայն սովորական կցում է, այլև կցման կասկադ (սանդղաջրված) է և կամ էլ կցման „իծաշարուկ„: Կցումը կարող է կրկնվել տների միջև... Ես իմ անուշ Դայաստանի,, տաղի առաջին տան վերջում հանդես եկող *սիրում* բառը կրկնվում է երկրորդ տան սկզբում՝ կցում տները:

Կցման օրինակների բազմազանությունը առատ է Նարեկացու, Սայաթ-Նովայի և Թումանյանի, մյուս մեծերի մոտ ռեդիֆից առաջ գտնվող բառի կրկնությունների, տողամիջի՝ անդամից հետո հանդես եկող և այլն: Արձակում կցման ընդգծված մնուշ է Մ.Բուլգակովի „Վարպետը և Մարգարիտան,, վեպը, ուր որոշ հաջորդ գլուխներ նախորդ գլխի ավարտ-նախադասության կրկնությամբ է սկսվում¹⁰:

Կա բառակրկնության տեսակ, որը մի քանի դերով է հանդես գալիս, բացի իմաստային աստիճանավորում-ուժեղացման նպատակից, նաև երաժշտական հնչերանգի ուժեղացման՝ մեղեդու դողանքի շարունակման և այլակարգ նպատակով: Խոսքը պրոսապոդոսիսի (հուն.՝ օդակ, բառացի՝ գերհավելում) մասին է: Բանատողի կամ բառախմբի կրկնությունը նույն ոտանավորի բանատողի սկզբում և վերջում: Օր.՝ „ Սուտ կյանքին խառնիր երազանքը սուտ,, /Վ.Տերյան/:

եվ վերջապես, բառակրկնությունների տեսակների միատեղ կիրառումը, որը կոչվում է *սիմպլոկ*¹¹ (հուն.՝ միախյուսում, բաղիյուսում¹²): „Հայերենագիտական բառարանի, բացատրությունը¹² ... Նախորդ հնարների (անաֆոր, էպիֆոր -Մ.Ս.) համակցում է, ինչպես՝

Սիրտդ որպես վառ ատրուշան, պահիր վառ,

Սիրտդ հրկեզ մթնում դաժան, պահիր վառ ... (Վ.Տերյան)

Թերի է, որովհետև միախյուսման, բաղիյուսման մեջ պիտի լինի նաև կցումը: Օրինակ.

Ինչքան որ հուր կա իմ սրտում- բոլորը քեզ.

Ինչքան կրակ ու վառ խնդում- քուրդը քեզ.

Բոլոր չոր տամ ու նվիրեմ, ինձ ոչ մի հուր թող չմնա՝

Դու՝ չմրսես ձմռան ցրտում- բոլոր չքեզ...

Լե. Չարենց/

Ժամանակն է նաև ճշտելու *ռեֆրենի* հարցը և օգտվել հայերեն միասնական տերմինից: Մանուկ Աբեղյանը գրում է. «...Բացի տնից պետք է նկատի ունենալ նաև կրկնակը կամ դարձը (հանգերգ, ֆր. refrain, ռուս. *припев*)¹³»: Էդվարդ Ջրբաշյանը. «*Կրկներգ, ռեֆրեն* (ֆր. refrain- կրկնակի բանաստեղծական տող կամ տուն, որը որոշ հերթականությամբ կրկնվում է ոտանավաորի տարբեր մասերում»¹⁴:

Մինչդեռ *ռեֆրենը*, բացի պոեզիայից, հանդես է գալիս նաև գրականության մյուս՝ էպիկական և դրամատիկական սեռերում, որն արդեն *կրկներգ*՝ երգի կրկնությունն է: Ա.Բակունցի „Ալպիական մանուշակում,, «Ծաղկափռու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք է թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան»: Վ.Սարոյանի „Իմ սիրտը լեռներում է,,. « Աշխարհում ինչ-որ տեղ. ինչ-որ բան սխալ է,,:

Աշխարհն օգտվում է *ֆաբուլայից, սյուժեից* (սյուժետ), իսկ մեզնում *սյուժեն* „թարգմանվում,, է *դիպաշար*¹⁵ և միթե՝ *սյուժեն* միայն դեպքերի շարք կամ շարան է: Այժմ էլ *ռիթմն*՝ է „թարգմանվում,,՝ *կշռույթ*¹⁶, *պոետիկան*՝ *բանարվեստ*¹⁷, *դետալը*՝ *մանրամասն, մասսա*. Մի գրականագետ *դետալի* փոխարեն կիրառում է *մասսա*¹⁸ տերմինը, որը տարածում չստացավ: Գրականագետների մեծ մասն օգտվում է *մանրամասն*¹⁹ տերմինից, որի մասին Ջրբաշյանի բառարանում առանձին բառ-հոդված չկա: Բառ-հոդված չկա նաև

դետալիզացիոն պորտրետիզացիայի՝ մանրամասնային կամ մանրամասնական դիմանկարման մասին:

Եվ վերջապես՝ բանաստեղծ, տաղասաց, տաղերգու, պոետ կամ՝ բանաստեղծություն, պոեզիա, չափածո, քերթություն և նման բաներ: Այդ ինչպե՞ս է, որ չափածոյի տեսությունը կոչել ենք *տաղաչափություն*, իսկ տաղի փոխարեն իրավունք է տրվել *բանաստեղծություն* բառին, որն ավելի վերաբերում է չափածոյին և՛ որպես սեռ, և՛ որպես ժանր, որը լայն տարածում գտավ 19-րդ դ. վերջերին և 20-րդ դ. սկզբներին:

Ինչևիցե, ժամանակն է գրականագիտական կլոր սեղանի, որպեսզի ընդհանրականություն դրսևորվի հատկապես գրականագիտության տերմիններ-րի ասպարեզում:

1. Էդ. Ջրբաշյան, Դ. Մախչանյան, «Գրականագիտական բառարան», Ե., 1988, էջ 212:
2. Նույն տեղը, էջ 331:
3. Նույն տեղը, էջ 296:
4. Նույն տեղը, էջ 330:
5. Նույն տեղը, էջ 181:
6. Դ. Զ. Պետրոսյան, «Հայերենագիտական բառարան», Ե., 1987, էջ 507:
7. Էդ. Ջրբաշյան, «Գրականագիտական բառարան», Ե., էջ 296:
8. Նույն տեղը, էջ 507:
9. „Литературный энциклопедический словарь“, М., 1987, стр. 22, „Краткая литературная энциклопедия“, М. 1972, т. 7, стр. 235, „English Literary Terms“, Л., 1967, p. 8.
10. М. Булгаков, „Мастер и Маргарита“, М., 1989, стр. 15, 31, 117, 146-149, 204.
11. „Литературный энциклопедический словарь“, М., 1987, стр. 380.
12. Դ. Զ. Պետրոսյան, «Հայերենագիտական բառարան», Ե., 1987, էջ 507:
13. Մ. Աբեղյան, «Երկեր», Ե., 1971, հ. Ե, էջ 380:
14. «Գրականագիտական բառարան», Ե., 1980, էջ 164:
15. Էդ. Ջրբաշյան, «Գրականագիտության ներածություն», Ե., 1996, էջ 107:
16. Պ. Սևակ, «Երկերի ժողովածու», Ե., 1976, հ. VI, էջ 424, Դ. Գասպարյան, «Պարույր Սևակ», Ե., 2001, էջ 409, 413:
17. Նույն տեղը, էջ 371, Էդ. Ջրբաշյան, «Գրականագիտության ներածություն», Ե., 1996, էջ 5:
18. Մ. Դյուլայան, «Էջեր արևմտահայ գրականության պատմությունից», Ե., 1977, էջ 62, 77:
19. Էդ. Ջրբաշյան, «Գրականագիտական բառարան», Ե., էջ 201:

